ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

#37

ՄԱՅԻՍ-ՀՈՒԼԻՍ

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԺԱՄԱՆԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԲԱՎԱՐԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿԻՆԸ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՎԵՑ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃԻՑ

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ LIFE 9 ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերի շրջանակներում 2019թ.-ի մայիս-հունիս ամիսների ընթացքում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն է իրականացվել Հայաստանում ՏՍՏ, ԼԳԲՏ, ԿՍԱ և ԹՆՕ համայնքների ներկայացուցիչների շրջանում:

748 Հետազոտված շահառուներ

18 ՄԻԱՎ դրական նոր դեպք

7 Վերցվել է դիսպանսերային հսկողության՝ բուժման, խնամքի և աջակցության հետագա տրամադրմամբ:

2019թ.-ի մայիս-հունիս ամիսներին ՆՍՀԿ կողմից տրամադրվել է **78** իրավաբանական խորհրդատվություն: Քրեական գործերով **6** անձանց ներկայացուցչություն՝ մինչդատական և դատական փուլերում:

2 վարչական գործի քննություն ՀՀ վարչական դատարանում:

2 քաղաքացիական գործի քննություն Երևանի ընդհանուր իրավասության դատարանում:

Ժամանակին համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
NEW GENERATION

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ HUMANITARIAN NON-GOVERNMENTAL ORGANIZATION

ՀՀ, 0002 Երևան, Թումանյան 41, բն. 4
RA, 0002 Yerevan, Apt. 4, 41 Tumanyan str.

+374 60 378989
+374 60 478989

newgenerationngo@gmail.com

https://ngngo.net

New Generation Humanitarian NGO

@NGNGOArmenia

ngngo.armenia

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.

Սկսած 1990թ.-ից ամեն տարի մայիսի 17-ն աշխարհում նշվում է որպես հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի և բիֆոբիայի դեմ պայքարի միջազգային օր, (The International Day Against Homophobia, transphobia and biphobia/ IDAHOBIT):

Օրը պատահական ընտրված չէ, քանզի 1990թ.-ի մայիսի 17-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպության հիվանդությունների միջազգային դասակարգչի 10-րդ վերանայմամբ նույնասեռականությունը հանվեց հոգեկան խանգարումների ցանկից:

Օրը նշելու գաղափարը ներկայացրել է ֆրանսիացի գրող և գիտնական Լուի-Ժորժ Տենը՝ հույս հայտնելով, որ այդ օրը կօգնի դեպի լավը փոխել այն մարդկանց կյանքը, ովքեր ավելի շատ ունեն դրա կարիքը: «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն յուրաքանչյուր տարի անդրադարձ է կատարում օրվա խորհրդին և կազմակերպում միջոցառումներ՝ ակցիաների, քննարկումների և ասուլիսների տեսքով՝ բնակչության ուշադրությունը ԼԳԲՏԻՔ մարդկանց հիմնախնդիրների վրա կենտրոնացնելու նպատակով: Այս տարի՝ 2019թ.-ի մայիսի 17-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն կազմակերպել էր «Մարդու իրավունքների պաշտպանությունը խտրականության կանխարգելման համատեքստում» թեմայով փակ քննարկում: Փակ քննարկման օրակարգում դրված էին հետևյալ թեմաները. «Խտրականության դեպքերի վերաբերյալ խորհրդատվությունների ընդհանուր վիճակագրությունը», «Առողջության իրավունքի խախտման դեպքերը և օրենսդրական բացերը», «Գենդերային վերափոխության իրավական ճանաչման մասին» ՀՀ օրենքի նախագիծ, «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծ», «Խտրականության հիմքով կատարվող հանցագործությունների վերաբերյալ քրեական գործեր», «Խտրականության հիմքով վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ քաղաքացիական ռազմավարական գործեր»,

«Անպատասխան գրություններ և հարցումներ պետական մարմիններին», «Կրոնական անհանդուրժողականությունը և 21-րդ դարի մարտահրավերները», «ԼԳԲՏ քրիստոնյաների 11-րդ միջազգային ֆորումի պատմությունը և ընթացքը», «ՔԿՀ-ներում ԳԲՏ ներկայացուցիչների նկատմամբ առկա խտրական դեպքերը», «Իրավապաշտպանների նկատմամբ գոյություն ունեցող խտրականությունը և ատելությունը, պետության դերը նրանց պաշտպանության մեջ»,

«Փաստաբանների նկատմամբ գոյություն ունեցող խտրականությունը և ատելությունը, պետության դերը նրանց պաշտպանության մեջ», «ԶԼՄ-ների դերը խտրականության ու ատելության դեմ պայքարի, ինչպես նաև հասարակական կարծիքի ձևավորման գործում»,

«Շուռնուխ»-ի դեպքը և հետևանքները:

Քննարկման սկզբում բացման խոսքով ելույթ ունեցավ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը: Այնուհետև ողջույնի խոսքով հանդես եկան օտարերկրյա դիվանագիտական կառույցների ներկայացուցիչները, ովքեր վերահաստատեցին իրենց պատրաստակամությունը՝ հնարավորինս օգնելու, որպեսզի Հայաստանում խարանը և խտրականությունը դուրս մղվեն հասարակությունից: Հրավիրված խոսնակները անդրադարձան վերջին մեկ տարում Հայաստանում տեղի ունեցած հոմոֆոբիայի, բիֆոբիայի և տրանսֆոբիային դրսևորումներին, մասնավորապես՝ 2018թ.-ին

Հայաստանում կայանալիք Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ԼԳԲՏ քրիստոնյա խմբերի տարեկան ֆորումի անցկացման առնչությամբ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի հանդեպ բարձրացված անհանդուրժողականությանը, ատելության ու բռնության կոչերին, ատելություն սերմանող հանրային միջոցառումներին, 2019թ.-ի ապրիլ ամսին ԱԺ-ում ելույթ ունեցած տրանսգենդեր կնոջ հանդեպ ատելության խոսքերին, սպառնալիքներին, Շուռնուխ գյուղում ԼԳԲՏԻ անձանց հանդեպ կատարված հարձակմանը և ԼԳԲՏԻ անձանց հետ կապված քրեական գործերի ընթացքին: Քննարկվեցին նաև ոլորտային առողջապահական և օրենսդրական խնդիրները և դրանց հնարավոր լուծման ուղիները: Քննարկման ավարտին ձեռք բերվեց պայմանավորվածություն հնչեցված բոլոր առաջարկությունները հավաքագրելու, խմբագրելու և պետական ու միջազգային կառույցներին ներկայացնելու վերաբերյալ:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի խնդրանքով մայիսի 21-ին ՀՀ-ում Արգենտինայի դեսպանատունը բարձրացրեց բազմազանության դրոշը՝ ի նշան համերաշխության և ԼԳԲՏԻ անձանց մարդու իրավունքների պաշտպանության:

Քննարկմանը մասնակցություն չի ապահովել ՀՀ Արդարադատության նախարարությունը, իսկ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարարը հրաժարվել է մասնակցությունից քննարկումից 30 րոպե առաջ: Նախարարությունների կողմից նման արձագանքը շատ ցավալի է, քանի որ միայն երկխոսության միջոցով է հնարավոր լուծումներ գտնել առկա հիմնախնդրի կարգավորման համար:

1990թ.-ի մայիսի 17-ին նույնասեռականությունը հանվեց ԱՀԿ հիվանդությունների միջազգային դասակարգչի հոգեկան խանգարումների ցանկից: Ահա թե ինչու է մայիսի 17-ը նշվում որպես հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի և բիֆոբիայի դեմ պայքարի միջազգային օր: Այժմ՝ 29 տարի անց, աշխարհի շատ պետություններ կատարելագործել են հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի և բիֆոբիայի դեմ պայքարի մեխանիզմները և ստեղծել են անվտանգ, ատելությունից ու բռնությունից զերծ միջավայր ԼԳԲՏԻ անձանց համար: Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց հանդեպ անհանդուրժողականությունը, ատելությունն ու բռնությունը շարունակում են մնալ լուրջ հրամայական ինչպես մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների, իրավապաշտպանների ու ակտիվիստների, այնպես էլ ՀՀ կառավարության և հասարակության համար:

ԼԳԲՏԻ անձինք ենթարկվում են խտրականության ամենուր և տարբեր կազմակերպությունների, անհատների և քաղաքական գործիչների համար դառնում շահարկումների, հասարակության մեջ դժգոհություններ առաջացնելու, հասարակությանը բաժանելու և Եվրապական ու Արևմտյան արժեքների դեմ հակաքարոզի առիթ:

ՀՅՈՒՐԵՐԸ IDAHOBIT-Ի ՄԱՍԻՆ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

2019 թ.-ի հունիսի 10-16-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Մյունխեն քաղաքում տեղի ունեցավ «Նոր Սերունդ»Մարդասիրական ՀԿ-ի (ՆՍՀԿ) և «Բավարիայի երիտասարդական խորհուրդ»-ի (BJR) համագործակցության շրջանակներում երիտասարդական ոլորտի աշխատողների վերապատրաստման փոխանակման ծրագիրը:

Փոխանակման ծրագրին մասնակցում էին Հայաստանի ու Գերմանիայի Հասարակական Կազմակերպությունների ներկայացուցիչներ,համայնքապետարանների աշխատակիցներ, որոնք աշխատում են ՀՀ երիտասարդների զբաղվածության, նրանց ժամանցի ապահովման և այլ հիմնախնդիրների լուծման ոլորտում:

Վերապատրաստման ընթացքում երիտասարդները այցելեցին և ծանոթացան Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գործող երիտասարդական հիմնախնդիրներով զբաղվող կառույցների գործունեությանը, այցելեցին Բավարիայի խորհրդարան, որտեղ հանդիպում ունեցան խորհրդարանի պատգամավորների հետ:

Փոխանակումը ներառում էր նաև ճանաչողական ու մշակութային շրջայցեր, արշավներ: Մասնակիցները նաև հնարավորություն ունեցան՝ այցելելու Ավստրիայի Զալցբուրգ քաղաքը:

Ակտիվ աշխատանքային մթնոլորտում մասնակիցները նախագծեցին և մշակեցին հետագա համագործակցության պլանը և փոխայցերի ժամանակացույցը:

Մասնակիցները ծրագրի ավարտին հնարավորություն կունենան ներկայացնել փոքր դրամաշնորհային ծրագրեր որոնք ուղղված կլինեն երիտասարդական ծրագրերի իրականացմանը ու երիտասարդական աշխատանքի զարգացմանը Հայաստանում:

ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿԻՆԸ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՎԵՑ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃԻՑ

2019թ. հունիսի 3-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Ավանի նստավայրում տեղի ունեցավ ՆՍՀԿ շահառու տրանսգենդեր անձՍ.Պ-ի քրեական գործով հերթական դատական նիստը:
Դատական նիստին ՆՍՀԿ փաստաբան Արա Ղարագյոզյանը միջնորդություն ներկայացրեց Ս.Պ-ի խափանման միջոց կալանքը ստորագրությամբ չհեռանալու մասին խափանման միջոցով փոխարինելու մասին: Գործով դատախազ Ռ.Մանուկյանը չառարկեց միջնորդության դեմ, նշելով, որ գործի քննության ընթացքում մեղադրյալը ցուցաբերել է դրական վարքագիծ: Արդյունքում դատավոր Հ.Մանուկյանը բավարարեց պաշտպանի ներկայացրած միջնորդությունը և Ս.Պ-ի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինեց ստորագրությամբ չհեռանալու մասին խափանման միջոցով և Ս.Պ.-ն ազատ արձակվեց դատական նիստերի դահլիճից:

ՆՍՀԿ փաստաբան Արա Ղարագյոզյանի խոսքերով սա սպասված որոշում էր, որը պետք էր վաղուց կայացնել, քանի որ իր պաշտպանյալ Ս.Պ.-ն կալանքի տակ է գտնվել ապօրինի կերպով: Պաշտպանի կողմից նախկինում ևս ներկայացվել է խափանման միջոց կալանքը գրավով փոխարինելու մասին միջնորդություն, որը բավարարվել է դատարանի կողմից: Նշանակվել է 5.000.000 ՀՀ դրամի չափով գրավ, որը վճարելու հնարավորություն չունենալու պատճառով Ս.Պ.-ն շարունակել է մնալ կալանքի տակ:
ՆՍՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանի համոզմամբ սա դրական ձեռքբերումների սկիզբն է միայն և «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն հետևողական է լինելու իր յուրաքանչյուր շահառուի գործով արդար դատաքննության իրականացմանն և խտրականության բացառմանը:
Գործի նախապատմությունը.
Տրանսգենդեր կանայք՝ Ա.Ա.-ն, Ս.Պ.-ն և Ա.Ս.-ն գտնվել են Երևան քաղաքի Զաքյան փողոցում, երբ Ա.Զ.-ն իր սև գույնի BMW մակնիշի ավտոմեքենայով կանգ է առել նրանց մոտ: Ուղևորի նստատեղում գտնվող աղջիկը լուսանկարել է տրանսգենդեր կանանց և հայհոյել, որոնք ի պատասխան նույնպես հայհոյել են: Ա.Զ.-ն դուրս է եկել ավտոմեքենայից և հարվածել Ս.Պ.-ին, հարձակվել Ա.Ս.-ի վրա և փորձել խեղդել: Այնուհետև նրանք նստել են ավտոմեքենան և հեռացել դեպքի վայրից: Դեպքի վայր են ժամանել ՀՀ ոստիկանության աշխատակիցները: Արդյունքում տուժող ճանաչվելու փոխարեն, Ս.Պ. -ն գործում ներգրավվել է որպես մեղադրյալ: 2017թ.-ի սեպտեմբերի 22-ին հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով:
Կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում Ս.Պ.-ն բազմիցս ենթարկվել է դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և խոշտանգման, որի վերաբերյալ նույնպես փաստաբանի կողմից ներկայացվել է հանցագործության մասին հաղորդում:
Ս.Պ.-ն կալանքի տակ էր գտնվում շուրջ երկու տարի:

ԿԱՅԱՑԱՎ LIFE 9 ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԸ

«Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ LIFE 9 ակտիվիստների վերապատրաստման դասընթացը:

Դասընթացի նպատակն է ակտիվիստների ծանոթացումը կամավորական աշխատանքին ու թե ինչպես հենց իրենք կարող են նպաստել ՀՀ-ում ՄԻԱՎ-ի կանխարգելմանը: Եռօրյա դասընթացի ընթացքում առաջադեմ ակտիվիստները ծանոթացան հետևյալ թեմաներին՝

- Կամավորները որպես ՄԻԱՎ-ի հակազդման ծրագրի շահառուներ
- Կամավորները որպես ՄԻԱՎ-ի հակազդման ծրագրի առաջնորդներ և գործընկերներ
- ՄԻԱՎ-ի հակազդման ազգային ծրագրում կամավորների ներգրավվածության կարևորությունը:

Վերոնշյալ թեմաների շրջնականերում մասնակիցները քննարկեցին, թե ո՞րն է կամավորների դերն ու նշանակությունը ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի մարտահրավերին դիմակայության գործում, ի՞նչ գիտեն ՄԻԱՎ-ի մասին մասնակիցները, ի՞նչ է ՁԻԱՀ-ը, ովքե՞ր են առավել ռիսկի ենթարկված խմբերը, կանխարգելման բաղադրիչը, ՀՀ օրենսդրությունն ու քաղաքականությունը, կամավորների ներգրավման երեք-ոսպնյակի մեթոդը, կամավորների ներգրավվածությունը որպես շահառուներ, գործընկերներ և առաջնորդներ, ծառայությունների մատուցման երեք մեթոդները:

Դասընթացը կրելու է շարունակական բնույթ, վերապատրաստված մասնակիցները հնարավորություն են ստանալու վարելու դասընթացներ, իրենց ստացած գիտելիքներով կիսվելու կամավորական աշխատանքում ներգրավվել ցանկացող այլ ակտիվիստների շրջանում, ինչպես նաև ակտիվ մասնակցություն են ունենալու ՄԻԱՎ-ին հակազդմանն ուղղված կամավորական գործում : Դասընթացի փորձագետն էր Գլոբալ հիմնադրամի ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի Միջոցառումների համակարգման հանձնաժողովի «Համայնքային ներգրավվածության, մարդու իրավունքների և գենդերային հավասարության» աշխատանքային խմբի համակարգող Մարիամ Մուրադյանը: